են. նրանք մինչեւ անգամ խառն են լինում յարեմական գաղտնիքների մէջ, եւ խաթունների հաւատարիմ խորհրդապահներն են դառնում: Փաշաների գանձապետները հայեր են, եւ նրանց կաշառակերութեան խիստ վարպետ հայթայթողներն են լինում: Թողնենք մասնաւորը, անցնենք ընդհանուրին. մի գիւղ, որ բնակեցրած է ամբողջապէս հայերով, աւելի բարձր գին ունի, քան թէ նոյն տարածութեամբ եւ նոյն բազմամարդութեամբ մի ուրիշ գիւղ, որ մահմեդականներով էր բնակեցրած: Ինչո՞ւ: Որովհետեւ հայը հլու եւ արդիւնաւոր հպատակ է: Նա հլու է, երբ տէրն օտարազգի է, բայց ես գիտեմ գիւղացիներ, որ վատ են վարւում իրանց տիրոջ հետ, որովհետեւ նա հայ էր: Դա ինչի՞ց է:

Ասլանը, որ բոլոր ժամանակը ուշադրութեամբ լսում էր, պատասխանեց.

— Պատճառը շատ պարզ է: Մեր ներկան, դուք ինքներդ ասացիք, որ մեր անցեալի շարունակութիւնն է: Այդ տխուր երեւոյթների պատճառները պէտք է որոնենք մեր տխուր պատմութեան մէջ...

Համարեա առաւօտեան լուսաբացի մօտ էր, երբ մենք դուրս եկանք տէր հօր տնից եւ գնացինք մեր բնակարանը, վարպետ Փանոսի տունը: Դուրս գալու միջոցին Ասլանը խորին շնորհակալութեամբ բռնեց տիկնոջ ձեռքը եւ ասաց.

— Մենք, յոյս ունեմ, դարձեալ կը տեսնուենք:

— Անպատճառ, — ասաց տիկինը:

— Որտե՞ղ:

— Ես կը գամ քեզ մօտ:

— Դա անյարմար չէ՞ր լինի:

— Ամենեւին:

ԺԷ. ՊԱՆԴՈՒԽՏ ՎԱՆԵՑԻՆ

Օրը շաբաթ էր, այն սպասուած օրը, որի գիշերը ես ու Ասլանը հրաւիրուած էինք սրբազան առաջնորդի մօտ: Ասլանը զբաղուած էր ինչ-որ պատրաստութիւններով, իսկ ես, անգործութիւնից ձանձրացած, չգիտէի ինչ անել: Առաջնորդի հրաւէրքը ինձ խիստ հրապուրում էր, բայց մինչեւ երեկոյ սպասե՞լ, այդ շատ եւ շատ ծանր էր ինձ համար: Դուրս եկայ փողոցը, նստեցի մի հաստաբուն ուռենիի հովանու ներքոյ, հոսող առուակի ափի մօտ: Այդ ուռիները ամառնային տօթերի ժամանակ խիստ զով պատսպարան են բնակիչ-